ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Անունը, ազգանունը. **Արմեն Ղազարյան**
2.	Զբաղեցրած պաշտոնը. **ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պետ**
3.	Գործուղման վայրը և ժամկետները. **2019 թվականի մարտի 12-14**
4.	Հրավիրող կողմը. **ՄԱԿ ՓԳՀ**
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). **Արևելյան Եվրոպայում ապաստանի համակարգերի որակի նախաձեռնության բարձր մակարդակի տարածաշրջանային համաժողովին մասնակցելու նպատակով**
6.	Քննարկված թեմաները. **Համաժողովի ընթացքում քննարկվել է Արևելյան Եվրոպայի վեց երկրներում՝** Ուկրաինայում, Բելառուսում, Մոլդովայում, Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում, ապաստանի համակարգերի զարգացման հետ կապված հարցեր: **ՄԱԿ ՓԳՀ-ի ապաստանի համակարգերի որակի նախաձեռնությունը մեկնարկել է 2013թ-ին,** ինչից հետո այս համաժողովն առաջին բարձր մակարդակի հանդիպումն էր, որին **մշտապես նախորդել են աշխատանքային բնույթի հանդիպումներ:** Համաժողովի երեք հիմնական թեմաներն էին արդար և արդյունավետ ապաստանի ընթացակարգերի բաղադրիչները, ազգային անվտանգության պաշտպանությունը՝ առանց փախստականների պաշտպանության խաթարման հետ կապված հարցերը, ինչպես նաև ապաստանի համակարգերի «մարդկային չափումը»:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. Այցի ընթացքում վեց երկրների պատվիրակությունների ղեկավարները աշխատանքային ճաշ ունեցան ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի տեղեկալ Վոլկեր Տյուրկի հետ, որի ընթացքում բարձրաձրեցի մերժում ստացած ապաստան հայցողներին ծագման երկիր վերադարձնելու հարցը: Ներկայում **այդ գործընթացի համար** նախատեսված միջազգային մեխանիզմը գործում է Միգրացիայի Միջազգային կազմակերպության հովանու ներքո (Աջակցվող կամավոր վերադարձ), սակայն դեպքերի մեծամասնությունում այս գործընթացն իրականացվում է դանդաղ, իսկ որոշ դեպքերում անարդյունք: Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկեցի

	համագործակցություն ձևավորել ՄՄԿ-ի, ՄԱԿ ՓԳՀ-ի և անդամ պետությունների միջև նշված գործընթացն ավելի սահուն դարձնելու նպատակով, ինչը դրական արձագանք ստացավ: Համաժողովի ընթացքում ելույթս վերաբերել է ազգային անվտանգության ապահովմանը՝ առանց խաթարելու փախստականների պաշտպանության համակարգը: Ներկայացրել եմ Հայաստանում փախստականի կարգավիճակի որոշման գործընթացը, ինչպես նաև դրա շրջանակներում ազգային անվտանգության մարմինների դերը, վերջիններիս հետ համագործակցության շարունակական ամրապնդումն ու առավել արդյունավետ դարձնելը: Միաժամանակ որպես առաջարկ ներկայացրել եմ 1951թ-ի Ժնևի կոնվենցիան բարեփոխելու հնարավորության քննարկումը՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները, մասնավորապես «շարունակական տեղաշարժը» (onward movement) և «ապաստանի առևտրի» (asylum shopping) հետ կապված հարցերը: Առաջարկը աջակցություն ստացավ համաժողովի ներկա պետությունների ներկայացուցիչների, մասնավորապես Ուկրաինայի կողմից, սակայն որոշակի սկեպտիկ վերաբերմունքի արժանացավ ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայացուցիչների կողմից:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. Հանդիպման ընթացքում որոշվեց պահպանել որակի նախաձեռնության գործունեությունը (հաշվի առնելով ՄԱԿ ՓԳՀ ներսում տեղի ունեցող կառուցվածքային և բյուջետային հատկացումների փոփոխությունները, որոնցով նախատեսվում էր կրճատել ծրագիրը, սակայն այդ թվում նաև հայկական կողմի պնդումների արդյունքում հաջողվեց պահպանել ծրագիրը), սակայն որոշակիորեն փոխել միջոցառումների ձևաչափը: Հայկական կողմն առաջարկեց ձևավորել թեմատիկ պլատֆորմներ ապաստանին առնչվող յուրաքանչյուր թեմայի մասով: ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայացուցիչները հետագա մասնավոր զրույցներում առաջարկեցին ազգային անվտանգությանն առնչվող թեմատիկ պլատֆորմն անցկացնել Երևանում: Նշվեց, որ հարցը հետագայում կքննարկվի:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները. Երևանում ազգային անվտանգությանն առնչվող թեմատիկ պլատֆորմի անցկացման վերաբերյալ հետագա քննարկումներ կանցկացվեն ՄԱԿ ՓԳՀ-ի երևանյան գրասենյակի հետ: Հայկական կողմը (Միգրացիոն ծառայությունը) կարող է կազմել միջոցառման բովանդակային մասը, իսկ ՄԱԿ ՓԳՀ երևանյան ներկայացուցչությունը կարող է կատարել կազմակերպչական և ֆինանսական ներդրումը:

10.	Ստորագրությունը, ամսաթիվը:	18.03.2019